Պարոն/Տիկին _____ ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

_____

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավարական խորհրդակցությանը ներկայացնելու համար

_____

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Մ. Մեսրոպյան_____

«21» 10 2025թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Մ. Մեսրոպյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝** Արմեն Հունանյան:

2.Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության պետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Նիկոսիա, Կիպրոս, 2025 թվականի հոկտեմբերի 14-15-ը:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Հեռահաղորդակցության միջազգային միություն (ՀՄՄ/ITU):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցել Հեռահաղորդակցության միջազգային միության, Եվրոպական միության արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների ցանցի և Եվրամիջերկրական կարգավորողների խմբի եռակողմ համագործակցության շրջանակում կազմակերպվող կարողությունների զարգացման աշխատաժողովին՝ «Շարժական կապի ենթակառուցվածքների հուսալիությունն/դիմադրողականության ու ծառայությունների որակը կարգավորող մարմինների համար» թեմայով:

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ Միջոցառումը կազմակերպվել է ՀՄՄ-ի և Կիպրոսի թվային անվտանգության վարչության կողմից և հիմնված է 2023 թվականին Կիպրոսում կազմակերպված՝ Եվրոպայի և Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի

համար նախատեսված միջտարածաշրջանային կիբերվարժության հաջող իրականացված փորձի վրա և իրականացվում էր ՀՄՄ-ի էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի զարգացման սեկտորի (ITU-D) անդամ Rohde & Schwarz կազմակերպության հետ համատեղ:

Աշխատաժողովի նպատակն է բարձրացնել էլեկտրոնային հաղորդակցության կարգավորող մարմինների կարողությունները՝ ապահովելու և նպաստելու հուսալի և դիմացկուն շարժական կապի ենթակառուցվածքների առկայությունը՝ միաժամանակ խթանելով Եվրոպական միության արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների ցանցի և Եվրամիջերկրական կարգավորողների խմբի անդամ կարգավորող մարմինների միջև համագործակցությունն ու գիտելիքների/փորձի փոխանակումը:

Հիմնական քննարկվող թեմաները վերաբերել են շարժական բջջային կապի ենթակառուցվածքների ապագա զարգացումներին և նոր սերնդի՝ առավելապես 5G տեխնոլոգիայի ցանցերի հուսալիությանն ու մարտահրավերներին, դրանց լուծումներին և ռիսկերի գնահատմանն ու այդ առնչությամբ ԵՄ ում կիրառելի անվտանգության միջոցառումներին և կարգավորման շրջանակներին:

7.Հանդիպումները, ելույթները՝ Աշխատաժողովի քննարկումների ընթացքում ներկայացվել է շարժական կապի ենթակառուցվածքների հուսալիությանն ու ծառայությունների որակին վերաբերող Հայաստանի Հանրապետության փորձը և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համապատասխան կարգավորումները:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ ֆորումի ընթացքում չկան ընդունված որոշումներ, պայմանավորվածություններ և ստորագրված փաստաթղթեր:

Գագաթնաժողովի օրակարգի, դրա ընթացքում կայացած ելույթների և այլ մանրամասնաերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանլի է հետևյալ հղմամբ՝ https://www.itu.int/en/ITU-D/Regional-Presence/Europe/Pages/Events/2024/11.12-14_ITUEaPeReg-EMERG%20Capacity-Building/Workshop-on-Quality-of-Service-and-Resilience-of-Digital-Infrastructure-for-Regulatory-Authorities.aspx :

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Աշխատաժողովի արդյունքներով պայմանավորված՝ առաջարկվում շարունակել մասնակցությունները Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից հետագայում կազմակերպվելիք նմանօրինակ առանցքային միջոցառումներին, ինչպես նաև դիտարկել շարժական կապի ենթակառուցվածքների հուսալիության ու ծառայությունների որակի ԵՄ փորձի կիրառելիության նպատակահարմարությունը ՀՀ-ում՝ մասնավորապես, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի սեպտեմբերի 3-ի №471-Ն որոշմամբ հաստատված՝ տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագների և պայմանների հրապարակման կարգի լրամշակման աշխատանքների շրջանակում:

Գործուղվող ---------- 21.10.2025 թ. ---------- ***Ա. Հունանյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 837-ՀՆ, 19.09.2025թ.**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության պետ՝ **Արմեն Հունանյան,**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ք.Նիկոսիա / Կիպրոս /**

5. Գործուղման ժամկետները **13.10.2025-16.10.2025թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Արմեն Հունանյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		
Այլ ծախսեր	Հակահամաճարակայի ն նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)			

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ

17.10.2025թ.